**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**ՆԱՀԱԿ-ԳՀԱՇՁԲ-22/2**

ք.Երևան «18» հունվարի 2022թ.

ՀՀ ԱՆ <<Ավան>> Հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա.Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ջավախք Շին>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հայրապետ Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ ԱՆ <<Ավան>> հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ի վարչական մասնաշենքի առանձնասենյակի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 60/վաթսուն/օրացուցային օր:

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N2):

**2.ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1.Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Ընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն ----- տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[27]

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N - Հավելվածում:[28]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.12 Պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, օգտագործելով սույն պայմանագրի հավելված N1.1ով սահմանված ռեսուրսները:

3.4.13 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն արձանագրությունը չի կնքում, հաստատում է հանձնման-ընդունման արձանագրությունը միայն այն էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից

---

27 Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:

28 Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:

հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող` կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի,կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը`

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել

կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների
ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5.ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 3120000 (երեք
միլիոն մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, որից 5200000 (հինգ հարյուր
քսան հազար) ՀՀ դրամը` ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից
իրականացվող բոլոր ծախսերը, ընդորում`
5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի
պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ
գինը:
5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի
օրացուցային գրաֆիկով նախատեսված` առանձին տեսակի
աշխատանքների, փուլերի և ծավալների` պայմանագրի 4-րդ բաժնով
նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի
Հանրապետության դրամով անկանխիկ` դրամական միջոցները
Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:
Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-
ընդունման արձանագրության հիման վրա` պայմանագրի վճարման
ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:
Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ
ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական
միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային
օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի
30-ը:
5.4 Սույն պայմանագրի 3. 4. 12 և 3.4.13 կետերով սահմանված
պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված
տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին
համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01. 04. 2021թ. թիվ 442-Ն
որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով կապալառուին
փոխհատուցվում է պայմանագրի գնի 1տոկոսը:

## 6.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի
որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային
գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:
6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման
ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր
ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ` կատարման
ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ
հարյուրերրորդական) տոկոսի չափով:
6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով
Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4
կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում
Կապալառուից գանձվում է տուգանք` պայմանագրի 5.1 կետում
նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի
չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի
արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում
կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու
դեպքում:
6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և
տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող
գումարների հետ:
6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված
ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ
յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար
հաշվարկվում է տույժ` վճարման ենթակա, սակայն չվճարված
գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:
6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց
պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու
համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ
սահմանված կարգով:

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

**6.7** Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

**7.ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**8.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

**8.1** Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[32]

**8.2** Պայմանագրից ծագած` կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

**8.3** Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

**8.4** Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

**8.5** Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

---

32 *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

**8.8** Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

**8.9** Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

**8.10** Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

**8.11** Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է **www.procurement.am** հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

**8.12** Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռքչբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**8.13** Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի **N 1, N 2, N 3, N 4** և **N 4.1** հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

**8.14** Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու**

ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[35]

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱՆ <<«Ավան» Հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան Աճառյան 1-ին նրբ., շենք 21
«Յունիբանկ» ՓԲԸ Աճառյան մ/ճ
Հ/Հ 24148000588300
ՀՎՀՀ 00886959
Հեռ. (+37460) 86-01-01
Էլ.փ. mpcavanclinic.gnumner@outlook.com

-----------------------------------

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<Ջավախք Շին>> ՍՊԸ
հասցե՝ ՀՀ, ք.Երևան
Գյուրջինյան փ., շենք 1/32
<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 19300754145400
ՀՎՀՀ 00905064
Էլ.փոստ՝ xanchali59@mail.ru
հեռ. (099) 751117

-----------------------------------

/ստորագրություն/
Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

---

[35] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ծանով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված թիվ 1
«18» հունվարի 2022թ. կնքված
ԱՀԱԿ-ԳՀԱՇՁԲ-22/2 ծածկագրով պայմանագրի

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ***
**«ՀՀ ԱՆ <<ԱՎԱՆ>> ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

*<u>Ծավալաթերթը կցվում է ֆայլով</u>*

***<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի, 5-րդ մասի համաձայն, եթե որևէ գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, ապա պետք է հասկանալ «կամ համարժեքը»:***

*Գնման ընթացակարգը կազմակերպվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա*

*Կապալառու աշխատանքները կատարում է ՀՀ, ք.Երևան Աճառյան 1-ին նրբ., շենք 21 հասցեում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱՆ <<«Ավան» Հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ
Հասցե` ՀՀ, ք.Երևան Աճառյան 1-ին նրբ., շենք 21
«Յունիբանկ» ՓԲԸ Աճառյան մ/ճ
Հ/Հ 24148000588300
ՀՎՀՀ 00886959
Հեռ.` (+37460) 86-01-01
Էլ.փ. mpcavanclinic.gnumner@outlook.com
--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<Ջավախք Շին>> ՍՊԸ
հասցե` ՀՀ, ք.Երևան
Գյուրջինյան փ., շենք 1/32
<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 19300754145400
ՀՎՀՀ 00905064
Էլ.փոստ` xanchali59@mail.ru
հեռ. (099) 751117
--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N1.1
«18» հունվարի 2022թ. կնքված

ՑԱՆԿ

հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման

| Չափաբաժնի N` | | | |
|---|---|---|---|
| Օգտագործվելիք նյութերի | | | Աշխատակիցների քանակը, որոնց միջոցով պետք է ապահովվի պայմանագրի կատարումը |
| Անվանում | Քանակ | Գումար/դրամ | |
| | | | |
| | | | |
| | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱՆ <<«Ավան» Հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ
Հասցե`ք.Երևան Աճառյան 1-ին նրբ.,շենք 21
«Յունիբանկ» ՓԲԸ Աճառյան մ/ճ
Հ/Հ 24148000588300
ՀՎՀՀ 00886959
Հեռ.` (+37460) 86-01-01
Էլ.փ. mpcavanclinic.gnumner@outlook.com
-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

<<Ջավախք Շին>> ՍՊԸ
հասցե` ՀՀ,ք.Երևան
Գյուրջինյան փ.,շենք 1/32
<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 19300754145400
ՀՎՀՀ 00905064
Էլ.փոստ` xanchali59@mail.ru
հեռ.(099) 751117
-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«18» հունվարի 2022թ. կնքված
ԱՀԱԿ-ԳՀԱՇՁԲ-22/2 ծածկագրով պայմանագրի

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**
**«ՀՀ ԱՆ <<ԱՎԱՆ>> ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը ** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | ՀՀ ԱՆ <<Ավան>>հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ի վարչական մասնաշենքի առանձնասենյակի վերանորոգման աշխատանքներ | *Պայմանագրի համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, լրացուցիչ համաձայնագրի կնքման պահից* | *60(վաթսուն) օրացուցային օրերի ընթացքում* |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | *60(վաթսուն) օրացուցային օրերի ընթացքում* |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱՆ <<«Ավան»Հոգեկան առողջության կենտրոն>>ՓԲԸ
Հասցե`ք.Երևան Աճառյան 1-ին նրբ.,շենք 21
«Յունիբանկ»ՓԲԸ Աճառյան մ/ճ
Հ/Հ 24148000588300
ՀՎՀՀ 00886959
Հեռ.` (+37460) 86-01-01
Էլ.փ. mpcavanclinic.gnumner@outlook.com
-----------------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<Ջավախք Շին>>ՍՊԸ
հասցե` ՀՀ,ք.Երևան
Գյուրջինյան փ.,շենք 1/32
<<Կոնվերս Բանկ>>ՓԲԸ
Հ/Հ 19300754145400
ՀՎՀՀ 00905064
Էլ.փոստ` xanchali59@mail.ru
հեռ.(099) 751117
-----------------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա,ապա <<Սկիզբը>>սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:

# ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ N1/ՀԱՄԱԴՐՈՒՄՈՎ/

## ՀՀ ԱՆ "ԱՎԱՆ" հոգեկան առողջության կենտրոն, վարչական մասնաշենքի առանձնասենյակի վերանորոգում

28.02.2022թ

| Հ.հ. | ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Չափման միավորը | Քանակը | Միավորի արժեքը հազ.դր | ԸՆԴԱՄԵՆԸ հազ.դր. |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | **Համաշինարարական աշխատանքներ** | | | | |
| | **1.Քանդման ו ապամոնտաժման աշխատանքներ** | | | | |
| 1.1 | Փայտե պատուհանների ապամոնտաժում պատուհա-նագոգերով | քմ | 8,28 | 1,1 | 9,11 |
| 1.2. | Փայտե դռների ապամոնտաժում | քմ | 1,89 | 1,45 | 2,75 |
| 1.3. | Լվացարանիի ապամոնտաժում | հատ | 1 | 0,84 | 0,84 |
| 1.4. | Թուջե խողովակների ապամոնտաժում | գմ | 2 | 0,605 | 1,21 |
| 1.5. | Մանրահատակի քանդում /մասնակի/ | քմ | 6 | 0,65 | 3,9 |
| 1.6 | Ցեմենտ ավազե երեսծգման շերտի քանդում 5սմ հաստությամբ/մասնակի | քմ | 6 | 0,96 | 5,76 |
| 1.7 | Պատերին փայտե պանելներով երեսպատման քանդում ներառյալ շրիշակները | քմ | 31 | 0,25 | 7,75 |
| 1.8 | Գաջի սվաղի քանդում պատերի վնասված հատված-ներում | քմ | 12 | 0,47 | 5,64 |
| 1.9 | Շինարարական աղբի հավաքում,բարձում ավտոինք-նաթափ և հեռացում 13կմ. | տն | 4,5 | 3,17 | 14,265 |
| **Ընդամենը 1** | | | | | **51,220** |
| | **2. Պատեր ו հատակներ** | | | | |
| 2.1. | Միջնորմների շարվածք թեթև բետոնե բլոկներով 10սմ հաստությամբ ամրանավորումով 1տակ 10,1քմ | խմ | 1,01 | 16,5 | 16,66 |
| 2.2. | Նույնը 20սմ.հաստությամբ երկու տակ | խմ | 0,6 | 26,5 | 15,9 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2.3. | Միջնորմների և պատերի ամրանավորում | տ | 0,07 | 400,00 | 28,00 |
| 2.4. | Թեթևբետոնե բլոկերի անցքերի լցափակում թեթև բետոնով | խմ | 1,1 | 11,00 | 12,10 |
| 2.5. | Միջնորմի իրականացում գիպսաստվարաթղթե սալերով 12,5մմ.հաստ,. ցինկապատ մետաղական պրոֆիլներով U/C70, ձայնամեկուսիչ 50+20 փրփրապլաստով | քմ | 16,3 | 8,81 | 143,60 |
| 2.6 | Ցեմենտ ավազե շաղախով պատերի բարձրորակ սվաղ | քմ | 22,2 | 1,8 | 39,96 |
| 2.7. | Նոր շարված պատերի և վնասված հատվածների գաջե բարձրորակ սվաղ | քմ | 0 | 1,67 | 0,00 |
| 2.8. | Հատակի երեսծգում ցեմենտ ավազե շաղախով 50մմ միջին հաստությամբ | քմ | 6,1 | 2,00 | 12,2 |
| 2.9. | Շեպերի սվաղ գաջե շաղախով | քմ | | 5,40 | 0,0 |
| 2.10. | Շեպերի սվաղ ցեմենտ ավազե շաղախով | քմ | 1,74 | 4,63 | 8,06 |
| 2.11. | Սանհանգույցի հատակի ջրամեկուսացում | քմ | 3 | 5,4 | 16,2 |
| **Ընդամենը 2** | | | | | **292,68** |
| | **3. Հարդարման աշխատանքներ** | | | | |
| 3.1. | Կախովի հարթ առաստաղի իրականացում գիպսաստվա ռաթխթե սալերով 9,5մմ հաստ. Ցինկապատ պրոֆիլներով F47,U26 | քմ | 38,32 | 4,7 | 180,104 |
| 3.2. | Նույնը պլաստիկ պրոֆիլով | քմ | 2,56 | 6,859 | 17,56 |
| 3.3. | Պատերի երեսպատում կերամիկական սալիկներով 2,7մ. բարձր. | քմ | 14,66 | 9,80 | 143,67 |
| 3.4. | Նույնը խոհանոցի պատի | քմ | 0 | 12,10 | 0,00 |
| 3.5. | Հատակների երեսպատում պրեսգրանիտե սալիկներով /600x600/ | քմ | 5,8 | 10,20 | 59,16 |
| 3.6 | Պրեսգրանիտե շրիշակների իրականացում 100մմ հաստ. | գմ | 4,3 | 1,8 | 7,74 |
| 3.7 | Պատերի բարձրորակ ներկում լաթեքսային ներկով | քմ | 81,14 | 1,8 | 146,05 |
| 3.8. | Նույնը արաստաղերի | քմ | 38,32 | 2,10 | 80,5 |
| 3.9. | Մակերեսների ներկում յուղաներկով | քմ | 0 | 1,65 | 0,0 |
| 3.10 | Արտաքին պատերի ներկում ֆասադաին ներկով | քմ | 0 | 2,6 | 0 |
| 3.11. | Հատակների իրականացում լամինացված սալիկներով Ա դասի 8մմ հաստ, շրիշակներով | քմ | 35,08 | 6,53 | 229,07 |
| **Ընդամենը 3** | | | | | **863,85** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 4. Դռներ ; պատուհաններ | | | | |
| 4.1. | ՄԴՖ խուլ դռների տեղադրում իր պա-րագաներով /Դ-1/ և/Դ-2/ | քմ | 3,57 | 22,95 | 81,94 |
| 4.2. | Մետաղապլաստե պատուհաններ բացվող | քմ | 5,4 | 35,96 | 194,18 |
| 4.3. | Նույնը չբացվող | քմ | 1,44 | 27,30 | 39,31 |
| | Պլաստիկ պատուհանագոգերի տեղադրում | գմ | 3 | 5,20 | 15,60 |
| **Ընդամենը 4** | | | | | **331,03** |
| | **5.Ներքին ջրամատակարարում** | | | | |
| 1. | Պոլիպրոպիլենաին Փ20 խողովակի մոնտաժում | մ | 3,5 | 1,2 | 4,2 |
| 2. | Փական Փ20 պոլիպրոպիլեն | հատ | 2 | 4,2 | 8,40 |
| 3. | Պոլիպրոպիլենաին խողովակի ձևավոր մասերՓ20 | հատ | 12 | 0,25 | 3.0 |
| 4. | Միացում գործող ջրագծին | տեղ | 2 | 3,10 | 6,20 |
| 5. | Փական Փ20 Arko | հատ | 3 | 2,40 | 7,20 |
| 6. | Լվացարանի տեղադրում | հատ | 1 | 52,0 | 52,00 |
| 7. | Ծորակի տեղադրում | հատ | 1 | 12,26 | 12,26 |
| 8. | Զուգարանակոնքի տեղադրում | հատ | 1 | 84,0 | 84,0 |
| 9. | Համակարգի փորցարկում | մ | 3,5 | 0,30 | 1,05 |
| **Ընդամենը 5** | | | | | **178,31** |
| | **.Ներքին կոյուղու ցանց** | | | | |
| 1. | Պոլիէթիլենաին Փ110մմ խողովակի տեղադրում | մ | 0 | 2,5 | 0 |
| 2. | Նույնը Փ63մմ. | մ | 2 | 1,20 | 2,40 |
| 3. | Պլաստմասե ձևավոր մասեր Փ110մմ | հատ | 3 | 1,30 | 3,90 |
| 4. | Պլաստմասե ձևավոր մասեր Փ63մմ | հատ | 4 | 1,55 | 6,20 |
| 5. | Միացում գործող գծին | տեղ | 1 | 7,00 | 7,00 |
| 6. | Համակարգի փորցարկում | մ | 4 | 0,50 | 2,00 |
| | **Ընդամենը** | | | | **21,50** |
| | **.Ջեռուցում** | | | | |
| 1. | Ալյումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում | էկմ | 0 | 2,3 | |
| 2. | Օդահան ծորակների մոնտաժում Փ 8մմ | հատ | 0 | 3,8 | |
| 3. | Ջերմակարգավորվող կափույրի տեղադրում Փ 16 մմ | հատ | 0 | 3,5 | |
| 4. | Հետգծի վրա փակիչ կափույրի տեղադրում Փ 16 մմ | հատ | 0 | 6,42 | |
| 5. | Պոլիպրոպիլենային խողովակների Փ 25 մմ տեղադրում | մ | 0 | 1,52 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6. | Միացում գոյություն ունեցող ջեռուցման համակարգին ձևափոխություններով | տեղ | 0 | 4,8 | |
| 7. | Մարտկոցների կախիչներ | հատ | 0 | 0,600 | |
| 8. | Դյուբելներ մարտկոցների և կախիչների համար | հատ | 0 | 0,81 | |
| 9. | Խամութներ խողովակների ամրեցման համար | հատ | 0 | 0,41 | |
| 10. | Թուջե մարտկոցների ապամոնտաժում, | տեղ | 0 | 2,10 | 0,00 |
| | **Ընդամենը** | | | | **0,00** |
| | **Էլեկտրալուսավորություն** | | | | |
| 1. | ՊՎ1*4մմ տեղադրում պատի մեջ | մ | 20 | 0,45 | 9,00 |
| 2. | Նույնը ՊՎ 1*2,5մմ | մ | 36 | 0,35 | 12,60 |
| 3. | Նույնը ՊՎ 1*1,5մմ | մ | 50 | 0,25 | 12,50 |
| 4. | Անջատիչի տեղադրում միաբևեռ | կոմպ | 2 | 2,50 | 5,00 |
| 5. | Նույնե երկբևեռ | հատ | 2 | 3,50 | 7,00 |
| 6. | Վարդակի տեղադրում երկտեղանի | հատ | 8 | 2,60 | 20,80 |
| 7. | Նույնե երեքտեղանի | հատ | 1 | 3,60 | 3,60 |
| 8. | Բաժանման տուփի տեղադրում | հատ | 4 | 6,10 | 24,40 |
| 9. | Յատակային վարդակների համակարգ /F/box/ | հատ | 1 | 35,00 | 35,00 |
| 10. | Լուսատու LED 600/600 36վտ կախովի | հատ | 0 | 19,50 | 0,00 |
| 11. | Նույնը R150 10վտ ներկառուցված | հատ | 6 | 3,80 | 22,80 |
| 12. | Լուսատու LED 24Վտ ф600մմ կախովի | հատ | 0 | 23,94 | 0,00 |
| 13. | Կախովի սփոտ լուսատու իր ձողոո 2մ | հատ | 5 | 33,85 | 169,3 |
| 14. | Մալուխների կարքաբերում | կ-տ | 1 | 20,00 | 20,00 |
| 15. | օժանդակ նյութեր | կ-տ | 1 | 16,00 | 16,00 |
| | **Ընդամենը** | | | | **358.0** |
| | ***ՓՈՓՈԽՎԱԾ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ*** | | | | |
| *1* | *Պատերի բարձորակ սվաղ գիպսոնիտով* | *քմ* | *67,01* | *3,72* | *249,612* |
| 2 | Շեղպերի բարձորակ սվաղ գիպսոնիտով | գծ/մ | 15,05 | 5,62 | 84,851 |
| 3 | Դռների շեղպերի իրականացում մինչև 10 սմ լայնությամբ | գծ/մ | 10 | 3,61 | 36,1 |
| 4 | Խոհանոցի պատերի երեսապատում բարձորակ կերամի-կական սալիկներով | քմ | 7,62 | 20,18 | 153,772 |
| 5 | Պատերի երեսապատում բարձորակ պաստառներով | քմ | 15,3 | 5,388 | 82,436 |
| 6 | Գոյություն ունեցող հարթ երեսապատման տուֆ քարերի վերամշակում | քմ | 1,8 | 1,9 | 3,42 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7 | Արտաքին պատերի իրականացում հարթ երեսապատման տուֆ քարից | քմ | 1,8 | 4,058 | 7,304 |
| 8 | Երեսապատման քարերի հետևում լիցքի իրականացում շաղախով | մ3 | 0,2 | 39,49 | 7,99 |
| 10 | Լուսավորության ջահի 9 մոմանոց իր լամպերով | հատ | 1.0 | 98,37 | 98,37 |
| 11 | Դռների շեմերի տեղադրում | հատ | 5.0 | 4,9 | 24,5 |
| 12 | Օդափոխության համակարգի իրականացում զուգարանում | կոմպ | 1.0 | 11,1 | 11,1 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **759,455** |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **2856,045** |
| | **ԱԱՀ 20%** | | | | **571,209** |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **3427,254** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ <Ավան> Հոգեբանական առողջության> ՓԲԸ
Հասցեն ք. Երևան Աճառյան 1-ին նրբ. շենք 21
<Յունիբանկ> ՓԲԸ Աճառյան մասնաճյուղ
Հ/Հ 2414800588300
ՀՎՀՀ 00886959
Հեռ.(+37460)86-01-01
Էլ. փոստ mpcavanclinic.gnumner@outlook.kom

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<Ջավախքշին> ՍՊԸ
Հասցեն ք. Երան Գյուրջյան փ. շենք 1/32
<Կոնվերսբանկ> ՓԲԸ
Հ/Հ 19300754145400
ՀՎՀՀ 00905064
Հեռ(099)751117
Էլ. փոստ xanchali59@mail.ru